



Սերգեյ Դովլատով

Դասալիք Լիմոնովը

...Էդուարդ Լիմոնովը հանգիստ հայտարարեց, որ չի ուզում լինել ռուս գրող:

Ինձ թվում է՝ դա նրա անձնական գործն է:

Բայց չգիտես ինչու բոլորը սարսափելի վիրավորվեցին: Ելույթ ունեցողներից գրեթե յուրաքանչյուրը քամահրեց Լիմոնովին, գործածելով, օրինակ, այսպիսի չարախիհնդ ձեւակերպումներ .

«...Պարոնր, որ չի ուզում ռուս գրող լինել...»

Կարծես թե Լիմոնովը մարտահրավեր է նետել մարդկային ցեղին:

Ակամա հիշում ես այսպիսի պատմական դեպք: Մոտենում էր Ստալինի ծննդյան օրը: Եթե չեմ սխալվում՝ յոթանասունամյա հոբելյանը: Հրավիրված էին խորհրդային առավել երեւելի քաղաքացիներ: Գրողներ, գիտնականներ, արտիստներ: Այդ թվում՝ ակադեմիկոս Կապիցան:

Եվ ահա հանդուգն Կապիցան իր մոտիկ մարդկանցից մեկին ասաց .

Ես Ստալինի մոտ չեմ գնա:

Մոտիկ մարդը տականքի մեկը դուրս եկավ: Կապիցայի հանդգնությունը հայտնի դարձավ:

Չայրացուցիչ արտահայտությունը փոխանցեցին Ստալինին: Բոլորը վստահ էին, թե Կապիցան դատապարտված է:

Իսկ Ստալինը մտածել, մտածել ու ասել է .

Դե, գլուխը քարը...

Նույնիսկ չի գնդակահարել ակադեմիկոսին:

Եվ դա Ստալինն էր: Գուցե մենք էլ լինենք փոքր-ինչ հանդուրժող:

Կարծես թե «ռուսգրողը» բարոյական մեծ նվաճում է: Իսկ մարդը, որ այդ կոչումը ձեռք չի բերել, հրեջ ու սատանա է:

ԽՍՀՄ-ում շուրջ երկու հազար ռուս գրող կա: Նրանց մեջ՝ համառ ու հուսահատ խարդախներ: Բոլոր նրանք երրորդ եւ չորրորդ բաժակների միջեւ սիրում են կրկնել .

Ես ռուս գրող եմ:

Մեղա քեզ, պատահել է՝ ես էլ եմ բացականչել նման բան: Տասներեքերորդ եւ տասնչորսերորդ բաժակների միջեւ...

Ես, օրինակ, ուզում եմ լինել ռուս գրող:

Ես, ըստ էության, հենց դրան էլ հետամուտ եմ: Իսկ Լիմոնովը չի ուզում: Դա, կրկնում եմ, նրա անձնական գործն է:

Այնուամենայնիվ, Լիմոնովը հիմարություն է դուրս տվել: Գրողի ազգությունը որոշում է լեզուն: Այն, որով գրում է: Հակառակ դեպքում՝ ամեն ինչ ահավոր խճճվում է:

Բաբելը, օրինակ, ի՞նչ գրող է: Ասենք՝ հրեական: Քանի որ նա հրեա էր Օդեսայից:

Բայց Վենիամին Կավերինը նույնպես հրեա է: Ճիշտ է, Խարկովից: Դանիել Գրանինն էլ է հրեա: Եվ սրիկա Չակովսկին է հրեա...

Բաբելի պատմվածքներում կերպավորվում են հրեաները: Բայց Կուպերի պատմվածքներում՝ հնդկացիներ են: Ուելսի գործերում՝ մարսեցիներ: Մետտոն-Թոմփսոնի պատմվածքներում առյուծները, աղվեսներն ու ոչխարներն են հերոսները... Մի՞թե Ուելսը մարսեցի գրող է...

Լիմոնովը, իհարկե, ռուս գրող է: Լավ թե վատ, դա արդեն ուրիշ հարց է: Ուզում է թե չի ուզում Լիմոնովը՝ լինել ռուս գրող աննշան հանգամանք է: Եվ Լիմոնովից իզուր են վիրավորվել:

Ես կասկածում եմ՝ դա խորհրդային բնագոյների դրսևորում է: Հեռանում են Ռուսաստանից՝ նշանակում է դավաճան են: Չարժե այդպես բորբոքվել...

Լիմոնովը տաղանդավոր մարդ է, ռուս ժամանակակից նիհիլիստ: Էդիկ Լիմոնովը ուղղակի շուկայական գարն է: Հեղձուցիչ, անթե, գոեհիկ մատերիալիզմի պտուղ...

Այդպիսի բան եղել է ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Արեւմուտքում: Եղել է Հենրի Մյուլերը: Եղել է Լուի Ֆերդինանդ Մելինը: Թվում է՝ դեռ ողջ է մեծն Ուիլյամ Բերրոուզը:

Լիմոնովը չի գերազանցել Հենրի Մյուլերին /իսկ ո՞ւմ է գերազանցել.../

Չարմանալի է, որ Լիմոնովին առանձնահատուկ եռանդով է քննադատել Ալեշկովսկին: Երկուսն էլ կյանքը պատկերում են բավական մռայլ գույներով: Երկուսն էլ «սեւ» ժանրի տաղանդավոր ներկայացուցիչներ են:

Մի խոսքով՝ ակնհայտ էր սարսափելի կոնֆլիկտը ավելի հրեշավոր հետեւանքներով...

Այն խորհրդածողովում Լիմոնովին հայիոյել են բոլորը: Մինչդեռ նրա վեպը ընթերցում են: Երեւի տաղանդը մեծ գործ է: Որովհետեւ հազվադեպ է պատահում: Բարոյական կայունությունը հանդիպում է ավելի հաճախ:

Առավելագույն հետաքրքրություն հարուցելով յուրայինների մոտ...